

ԱՐԻԱՑԻՆԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ ՊՈԼԻՆԵՋԻԱՅՈՒՄ

Լ. Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Լեզվաբանությունը հաստատուն տեղ է գրավել այն գիտաճյուղերի շարքում, որոնք կոչված են լուծելու պատմության առեղծվածները (պատմագիտություն, հնագիտություն, հնէաբանություն և այլն), որովհետև լեզուն, լինելով տարրեր ժողովուրդների և մշակույթների կապերի ու կրած ազդեցությունների կենդանի վկա, ի զորու է փաստելու ամենատարբեր մշակույթների փոխառնչությունները: Բացաված չէ, որ որևէ պատմական առեղծվածի լուծումը սկսվի հենց լեզվական ընդհանրությունների հայտնաբերումից, հետո միայն դրան միանան դիցաբանական, ազգագրական և այլ բնույթի հայտնագործություններ: Հիշենք, որ շումերների գոյության մասին առաջինը խոսել են ոչ թե պատմաբանները, այլ լեզվաբանները, որոնք, ձեռքի տակ չունենալով ոչ մի պատմական ապացույց, գիտական արտածման մեթոդով գտան աշխարհին դեռևս անհայտ այդ ժողովրդի հետքը՝ ելնելով բեռագրին հատուկ որոշ առանձնահատկություններից:

Ընդունում ենք, որ աշխարհագրական տեսակետից անհավանական, նույնիսկ զավեշտական կարող է թվալ արիացիների և Պոլինեզիայի հնարավոր կապերի մասին ամեն մի միտք: Սակայն լեզվաբանական հետազոտություններ կատարելիս ավելի լավ է մի կողմ թողնել բոլոր կանխադրույթները և, եթե հետազոտությունները թույլ են տալիս ենթադրել անմիջական փոխառությունների առկայություն, հետո միայն մտածել, թե դրանք ի՞նչ ճանապարհով են կատարվել: Եթե Հենրիխ Շլիմանը մի կողմ չդներ այն կանխադրույթը, ըստ որի՝ Հոմերոսի հանճարեղ պոեմները երևակայության արդյունք էին, չէր հայտնաբերի Տրոյան: Դա հայտնագործություն էր, որ մի ավելորդ անգամ ապացուցեց, թե բոլոր առասպելների ու ավանդությունների մեջ կա ճշմարտության հատիկ:

Պոլինեզիտն բազմաթիվ կղզիների մի «համաստեղություն է», որոնք սփռված են Մեծ կամ Խաղաղ օվկիանոսի կենտրոնական և արևելյան մասում: Այն նման է մի հսկայական եռանկյունու, որը փռված է հյուսիսից հարավ 3000 կմ և արևմուտքից արևելք 6000 կմ երկարությամբ: Այդ եռանկյունու արևելյան գագաթը Ջատկի կղզին է՝ Պոլինեզիայի ամենաառեղծվածային կղզին:

Պոլինեզիայի հանելուկային մշակույթի արմատները հետադոտողները փնտրել են ամենուր. նրանցից ոմանք նույնիսկ դուրս են եկել երկրագնդի սահմաններից և այն համարել «այլմուրակածին» (էրիխ Ֆոն Դենիկեն և այլք): Իսկ երկրագնդի սահմաններից դուրս չեկողները այդ մշակույթը և դիրքը նմանեցրել են Եգիպտոսի, շումերների, հին չինացիների գրին ու մշակույթին: Շատ մասնագետներ այդ մշակույթի նախահայրենիք են համարում Եգիպտոսը կամ Շումերը, սակայն այդ մասին բարձրաձայն չեն արտահայտվում:

Պոլինեզիայում թխամորթների, կարմրամորթների ու սպիտակամորթների առկայությունը չափից դուրս զարմացրել էր այն հայտնաբերող եվրոպացիներին, որոնք հաճախ են հիշատակել սպիտակամորթ և շիկահեր մարդկանց դոլության մասին: Այդ ժամանակ էլ ծնվեց այն վարկածը, ըստ որի, պոլինեզիացիների մարդաբանական տիպի մեջ կաին «եվրոպոիդ» (կովկասյան) տարրեր» (յոետր է ենթադրել, որ նյութի ունեին տրամենոիդ տիպը, քանի որ «կովկասոիդ» տիպ գոյություն չունի): Սակայն (ըստ երևույթին, անհավանականության կանխադրույթն էր պատճառը) այս տեսակետը լայն տարածում չստացավ և չհիմնավորվեց:

Մարդաբանները Պոլինեզիայում սպիտակամորթ բնակչության առկայությունը բացատրում են ավերակա (լսնամաշկություն) և փաստում, որ սպիտակամաշկ և շիկահեր մարդիկ հանդիպում են նաև Ավստրալիայում և Նոր Դվինեայում: Ի վերջո, դիտական աշխարհում որպես ճիշտ տեսակետ ընդունվեց այն վարկածը, ըստ որի, պոլինեզիացիների նախահայրենիքը եղել է Հավայյան Ասիան, իսկ պոլինեզիացիները ավստրալոիդ և մոնղոլոիդ տիպերի խառնուրդից են սերել:

Իսկ այժմ մի քանի զարմանալի փաստերի մասին: Պոլինեզիայի (և ոչ միայն Պոլինեզիայի) բոլոր կղզիներում տարածված է համաշխարհային շրջնողեղի մասին առասպելը, որը համարյա ոչնչով չի տարբերվում մեղ այնքան ծանոթ առասպելից. այստեղ էլ այդ սարսափելի արհավիրքից փրկվում են երկու հոգի՝ տղամարդ և կին, որոնք սկզբից մտածում էին փրկվել Օրոխենա լեռան կատարին (հիշենք այս անունը), բայց հետո ընտրում են մի այլ լեռ՝ Պիտո խոտի կրկնակի անունով և հանգրվանում նրա գագաթին: Հիշելով, սակայն, որ կան այսպես կոչված «թափառող սյուժեներ», ինչպես Մ. Արեդյանն է ասում. «Համաշխարհային սյուժեների արխիվ», սա դասում ենք նման սյուժեների շարքին: «Համաշխարհային» կոչված շրջնողեղ գիտնականների կարծիքով եղել է ընդամենը տեղական բնույթի իրադարձություն, որն ընդգրկել է Տիգրիսի ու Եփրատի ավազանը, սակայն տեղաբնիկների պատկերացմամբ համարվել է համաշխարհային աղետ:

Հաջորդ ամենատարածված ավանդությունը «սպիտակամորթ, շիկահեր և կապուտաշյա» եկվորների մասին առասպելն է, որը Թ. Հեյդալը գրանցել է Ձատկի կղզում: Սա նույնպես կարելի էր դասել «թափառող» սյուժեների շարքին, սակայն պարզվում է, որ իրոք, մ.թ.ա. II հազարամյակում Օվկիանիա է թափանցում եկվորների մեծ խումբ, որոնց մի մասը, որ անցել էր Մեյլանեզիա, ձուլվում է տեղաբնիկներին և նկատելի հետք չի թողնում այդ կղզիներում: Իսկ մյուս մասը, որ թափանցել էր Պոլինեզիա, ոչ միայն չի ձուլվում, այլև գերիշխող դիրք է գրավում բոլոր կղզիներում, համարյա աստվածացվում է տեղաբնիկների կողմից, ստեղծում արտոնյալ դաս և ուրույն մշակույթ: Որոշ մասնագետների (Պ. Ի. Պուլկով և այլք) կարծիքով, այդ եկվորները պատկանում էին մոնղոլոիդ ռասային:

Պոլինեզիայի տարբեր կղզիներում այդ եկվորներին մինչև օրս անվանում են «արիկի» կամ «արի» (Հավայան կղզիներում՝ ալիի): Ահա թե ինչ է գրում նրանց մասին Պ. Պուլկովը. «Արիկի-առաջնորդների և երևելիների դասային-կաստայական խումբ Ձաակի կղզում և Պոլինեզիայի մնացած կղզիներում: Հասարակական այլ խմբերի համեմատությամբ օգտվում էին լայն արտոնություններից: Համայնքի շարքային անդամները արիկիներին դիմելիս պարտավոր էին պահպանել խստակարգ վարվելաձև, իրավունք չունեին դիպել, իսկ երբեմն՝ նույնիսկ մոտենալ նրանց»¹:

Հայերենում «արի» արմատը նշանակում է «քաջ, հզոր, անմեղկելի, կորովի... և տոկուն՝ իբրև զայր»², իսկ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» բերվում են այդ բառի տարալեզու հոմանիշներն իրենց նշանակությամբ. կապադովկերեն՝ արի, հունարեն՝ արիագույն, զենդերեն՝ կատարյալ, սանսկրիտ՝ հավատալի, վրացերեն՝ արէ (արի):

Պոլինեզիական «արիկի», «արի» բառերը նշանակում են «առաջնորդ, արիստոկրատ»: Ակնհայտ է, որ իմաստային տեսակետից ոչ միայն չկա ոչ մի հակասություն, այլև վերոհիշյալ օրինակները կարծես թվարկում են այն բոլոր գրական արժանիքների, որոնցով պետք է օժտված լինի առաջնորդը կամ արիստոկրատը: Ըստ պոլինեզիական ավանդության, «արիկիները» (և միայն նրանք) օժտված են եղել գերբնական ուժով, որով կարողանում էին հար-

¹ М. Стингл. Последний рай, М., 1975, прим., с. 445.

² Իմ րադիքը Հայկազեան Լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 358: Տե՛ս նաև Ալ. Վաղգեա-յան. Ուրբե՛ր են ի վերջո արիացիները, Ե., 1990, էջ 19:

յուրավոր տոնականներ կշռող ժայռերը տեղաշարժել: Այդ ուժը մինչև օրս Պոլինեզիայում անվանում են «մանա»: Ակնհայտ է «մտնա» և «մանանա» բառերի առնչությունը:

Ըստ Հր. Աճառյանի՝ «Հիւրշ. կարծում է, որ բառը ասորերենից սխալ տառադարձությամբ անցած է մեզ: Դիտելի է, սակայն, թե մանանան Հայաստանի մեջ էլ է գտնվում, և հատկապես Տարոնի կողմերը, ուր դեռ մինչև այսօր պահում է այս անունը»³: Մանանա բառը հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներում տարբեր նշանակություններ ունի. սանսկրիտ՝ *anana*-սնունդ, ուսեբեն՝ *manana*, իսպաներեն մանա նշանակում է «կարողություն, ճարպկություն, խորամանկություն», իսկ «մանանա»՝ վաղ առավոտ կամ վաղ առավոտյան: Ուշագրավ է, որ Ղարաբաղի բարբառում մանանա բառի մեջ կերակուր և առավոտ հասկացությունները միավորված են, որովհետև Ղարաբաղում «մընանա անել» նշանակում է նախաճաշել: Ավելորդ ենք համարում խոսել «երկնային կերակուրի» (մանանա) և գերբնական ուժի (մանա) ակնառու առնչության մասին:

Պոլինեզիան իրոք զարմանալի աշխարհ է՝ իր ոչ պակաս զարմանալի բնակիչներով, որոնք մինչև օրս չեն դադարել վախենալ «ակու-ակու» (աքու-աքու)-ներից (քանի որ մենք ծանոթ չենք պոլինեզիների հնչյունական համակարգին, իսկ դիրքը⁴, որից քաղել ենք վերոհիշյալ բառերը, ուսեբեն է, փակագծերում բերում ենք արտասանության այլ հնարավոր տարբերակներ ևս): «Ակու-ակու» (աքու-աքու) նշանակում է ոգիներ (պետք է ենթադրել՝ շար ոգիներ, եթե նրանցից վախենում են): Մեր կարծիքով, բառը նմանահունչ է հողի, ոգի բառերին: Հր. Աճառյանը նշում է. «հողի, փխր. նաև անձ, մարդ, շուն, սառնանայ (ընդգծումը մերն է—Լ. Ս.) սիրտ... Արմատի երկրորդ ձևն է ոգի՝ գործածված նույն նշանակություններով, բնիկ հայ բառ»⁵:

Ըստ երևույթին, բառը գործածվել է ընդգծված «սատանա» իմաստով և իմաստային ու հնչյունական տեսակետից դարձյալ չկա ոչ մի հակասություն:

Պոլինեզիական ավանդության համաձայն, շրջաններից հետո ծովերի աստված Ռուա՝ խատուն դուրս է եկել օվկիանոսից և տարբեր կղզիներում հիմնել սրբարաններ: Ուշադրություն դարձնենք այդ սրբարանների անուններին. Բախատեա կղզու սրբարանը մինչև օրս կոչվում է Տախու էա: Հիշենք միջագետքյան հնագույն էա աստվածությունը և էա կամ Այա երկիրը, որ հիշատակում է Ստրաբոնը, և նույնացվում է Հայաստանին: Մուրեա կղզու սրբավայրը կոչվում է Ախուրու Ատամա (Ահուրու Ատամա), որը, մեր կարծիքով, Արամազդ անվան Ահուրա-Մազդա տարբերակի հնչյունափոխված ձևն է: Երրորդ սրբարանը, որը գտնվում է Խուախին կղզում, կոչվում է Մատաիրեա: Հիշենք փոքրասիական հնագույն Մա-Դիվիա աստվածուհուն, որ համարվում էր աստվածների մայր:

Ուշագրավ է, որ, ըստ ավանդության, այդ սրբարանների հիմքում Ռուա խատուն դնում էր, այսպես կոչված, «սրբազան» քարեր, որպիսիք հետագայում տեղադրվում էին բոլոր սրբարանների հիմքում: Արդյոք սա քարի պաշտամունքի վկայություն չէ, պաշտամունք, որ արիագիտները բերել էին իրենց հեռավոր՝ «քարերի երկիր» հայրենիքից:

Քանի որ վերոհիշյալ բոլոր նմանությունները համառորեն մեզ բերում են Հայկական լեռնաշխարհ և Միջագետք, այսինքն՝ արիների բնօրրանը, համարձակվում ենք կատարել նաև հետևյալ ենթադրությունը. հայտնի է, որ Զատիկի կղզու գերագույն առաջնորդները կոչվել են «արիկի մաու»: Արիկի բառի մասին արդեն խոսվել է, մնում է ավելացնել, որ շումերական «մա» արմատը նշանակել է «ծին»: Հիշենք, որ օտարները հայերիս կոչում էին արման, որը

³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. III, Ե., 1977, էջ 250, նշվ. աշխ., էջ 244:

⁴ М. СТИГЛ. նշվ. աշխ., էջ 244:

⁵ Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. III, էջ 106:

հետագայում դարձավ ար-մին, ար-մեն: Այսպիսով, «արիկի մառ» նշանակում է ոչ թե արթա, ինչպես բացատրում է Մ. Ստինգլը, այլ բառացիորեն նշանակում է «արիածին», կամ, կղզիաբնականների համար «արիածին» ինքնըստինքյան նշանակել է արթա, առաջնորդ...:

Զափազանց ուշագրավ երևույթ է պոլինեզիական հեթանոսական ՕՐՕ աստվածը: Հիմքեր կան ենթադրելու, որ այն արեգակնային Արա աստվածն է: Շատ խոսուն է այն փաստը, որ պոլինեզիական կղզաշխարհում, որի մեջ մտնող կղզիները հռչակված են մերձարևադարձային բնությամբ, զմրուխտ կանաչով, շողշողուն ջրվեժներով, ամպերի մեջ կորած լեռնագագաթներով, տարածված է ՕՐՕ (Արա) աստծո պաշտամունքը: Այս աստվածը հայկական դիցաբանում հեղել է մեռնող և հարուժուն առնող բնության, այնուհետև՝ արևի աստված (հիշենք Արա Գեղեցիկին և արալեզներին):

Պոլինեզիական ՕՐՕն «ծիածանի վրայով» իշնում էր երկիր, բարձրանում էր Տաիմոնու լեռը (լեռների պաշտամունք) և այնտեղից հիանում կղզու անբերակայնի գեղեցկությամբ (այս լեռն ունի երկճեղքված գագաթ): Մի անգամ նա տեսնում է մահկանացու իշխանուհի Վաիրումատին և սիրահարվում: Նրանք Րաիատեա կղզում հիմնում են գաղտնի Միություն և կոչում ԱՐԻՕԻ: Այժմ վերադառնանք հետ և հիշենք, որ շրհեղից փրկվելու համար զույգն ընտրել էր ՕՐՕխենա (ՕՐՕհենա) լեռը: Գուցե այն նշանակում է Արայի լեռ...: Արախենա: Ի դեպ, Թաիթի կղզու երեք ամենաբարձր լեռնագագաթների անուններն են՝ ՕՐՕխենա (ԱՐԱխենա), ՕՐՕֆիտի (ԱՐԱֆիտի) և ԱՐՐաի (ԱՐԱի): Զատկի կղզում կա ՕՐԽԻԱ անունով բնակավայր (Արիի երկիր էր կոչվում Վանա լճից արևմուտք ընկած տարածքը, Հայաստանի կարևոր քաղաքներից էր Արխիտան)⁶, ՕՐՕնգո (ԱՐԱնգո) անունով բնակավայր, արիկների 58 անուն ընդգրկող տոհմածառի՝ մեղ հալտնի ընդամենը մի քանի անուններից մեկն է՝ նգա ԱՐԱ... Պոլինեզիայի ամենաազդեցիկ ցեղախմբերից մեկը կոչվում է ԱՐԱՎԱ (խեթերեն «արավա» նշանակում է ազատ)⁷:

Հնդեվրոպական լեզուներում առկա է հայերենի սկզբնատառ ա-ի անկման օրինաչափություն (Արա-Ռա, Արամ-Ռամ, Աբրահամ-Րահամ, Առուստամ-Ռուստամ): Այժմ բերենք մի քանի պոլինեզիական անվանումներ՝ վերականգնելով «ա» սկզբնատառով. (Ա)Րանո, (Ա)Րարակու, (Ա)Րաիաեա, (Ա)Րանգի, (Ա)Րանո Արոի, (Ա)Րանեվեի, (Ա)Րաիվավա, (Ա)Րոտումա, (Ա)Րարոտոգա, (Ա)Րարոիա:

Պոլինեզիայի «ամենաառեղծվածային» Զատկի կղզին իր անվանումով պարտական է հուլանդացի Ռոգհենին, որը 1722 թ. ապրիլի 6-ի Սուրբ Զատկի օրը հայտնագործել է կղզին: Ճանապարհորդներին ապշեցրել էր կղզիաբնականների կազմը՝ սեամորթներ, կարմրամորթներ և սպիտակամորթներ, ինչպես նաև հսկայաչափ և անհամար քարարձանները, որոնք հարյուրներով սփռված էին կղզու ափերին: Տեղաբնիկների լեզվով կղզին կոչվում է Ռապանուի (Rapa Nui), որը նշանակում է Մեծ Ռապա: Կա նաև Փոքր Ռապա կղզի, որը կոչվում է Rapa Iti: Զատկի կղզին հարավային Ամերիկայի ափերից հեռու է 4000, իսկ Թաիթի կղզուց՝ 3000 կմ: Զորս կողմը անծայրածիր Մեծ կամ խաղաղ օվկիանոսն է, և ջրի այդ համատարած թագավորության մեջ վեր է խոյանում փոքրիկ, հրաբխային ծագման կղզին, որի չափերն են՝ 22×11 կմ:

Կղզու գիտական հետազոտությունները սկսվել են 1914—1915 թթ. անգլիացիների կողմից, այնուհետև դրանով զբաղվել են ֆրանսիացիները, բելգիացիները, լեիսները, ռուսները, ամերիկացիները և Գիլիի մասնագետները (պետություն, որին այժմ պատկանում է Զատկի կղզին): Երկու անգամ (1955 և 1986—87 թթ.) կղզին այցելել և նրա հետազոտություններին մասնակցել է նորվեգացի ճանապարհորդ Թուր Հեյերդալը: Սակայն կղզի այցելած բաղմա-

⁶ Մ. Գալուֆյան, Հայ ժողովրդի ծագումը, Մոսկով, 1982, էջ 52: Հայկական սովետական հանրագիտարան, Ե., 1980, հ. 6, էջ 134:

⁷ Ալ. Վարպետյան, Նշվ. աշխ., էջ 79:

թիվ արշավախմբերին և հետազոտողներին մինչև օրս չի հաջողվել պարզել ո՛չ կղզու հանելուկային մշակույթի արմատները, ո՛չ քարարձանների դադարները, և ո՛չ էլ վերծանվել է ոռոգո-ռոնգո կոչվող առեղծվածային գիրը:

Մ.թ.ա. 111 հազարամյակում Հայաստանում տարածված էր Միհրի պաշտամունքը: Միհրին նվիրված տաճարը գտնվել է պատմական Հայաստանի Դերշան գավառի Բազահառիձ գյուղում, նաև ենթադրվում է, որ Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արմավիրում ևս գտնվել է Միհրին նվիրված տաճար: Միհրի պաշտամունքը սկսել է վերանալ մ.թ. IV դարում միայն:

Հայոց լեզվում Միհրը թողել է մեհեան (հեթանոսական տաճար), մոխիր, մոհիր, Ազուլիսի բարբառում՝ մախիր կամ մահիր, Մոկքի բարբառում՝ մուխիր (այստեղից էլ՝ մուխ և մխալ բառերը՝ ծուխ-ծխալ իմաստներով): Միհրը արևի, կրակի աստվածն էր, և բոլոր այս բառերն ու նրանց իմաստները կապված են կրակի, այրման հետ: Մ. Գավուբյանը Միհրի անվան հետ է կապում նաև Սասունի Մեհրի կամ Մեխրի ցեղի անվանումը, որից անկասկած առաջացել են Առյուծաձև Մհեր և Փոքր Մհեր անունները⁸, Ավելի ուշ շրջանում, երբ Միհրի տոնը նշվել է փետրվարի 14-ին, ամիսը կոչվել է մեհեկան, իսկ տոները՝ մեհեհեկան:

Պոլիսեղիական աստվածներից մեկը կոչվում է Մեկե-Մեկե: Այն երկար ժամանակ եղել է Զատիկի կղզու դիցաբանի գերագույն աստվածը: Մեր կարծիքով, Մեկե-Մեկե-ն Միհրի հնչյունափոխված տարբերակն է, եթե նկատի ունենանք, որ այն հայոց լեզվում ունեցել է ՄԵՀԵԱՆ, ՄԵՀԵՆԱԿԱՆ և ՄԵՀԵԿԱՆ ձևավորումներ: Բնական է տրամաբանական է, որ արիները, ի թիվս այլ հասկացությունների ու աստվածների, իրենց հետ տանեին նաև Միհրի պաշտամունքը:

Զատիկի կղզու ամենաառեղծվածային, անլուծելի հանելուկի՝ հուշակավոր քարարձանների մասին շատ է գրվել, մենք կանգ կառնենք մի քանի յուրահատկությունների վրա, որոնք մինչև օրս տարակուսանքի մեջ են զգում Հայկական կղզիները և մասնավորապես Զատիկի կղզին ուսումնասիրող բոլոր հետազոտողներին.

- ա) ո՞ւմ արձաններն են դրանք,
- բ) ինչո՞ւ սրբարաններում կանգնեցված արձանները կոչվում են «դաշված»,
- գ) ինչո՞ւ գերմարդկային ձիգերով նրանց անպայման գլխարկ էին հագցրել,
- դ) եթե դրանք աստծո արձաններ են, ինչո՞ւ են այդքան բազմաքանակ,
- ե) եթե ցեղապետերի արձաններ են, ինչո՞ւ են կանգնեցված սրբարաններում և ինչո՞ւ են միադեմ,

զ) ինչո՞ւ միայն այս աստվածը ունի կրկնվող անուն՝ Մեկե-Մեկե:
Վերոհիշյալ քարարձանները ինչպես նկարագրում է Ստինգլը, կերտվում էին ոչ թե սրբարանների մոտ բերված քարակտորներից, այլ Բանո Բարակու լեռան լանջին, անմիջապես քարհանքում և առանց քարակտորը ժայռից առանձնացնելու: Ռապանույցիները միշտ սկզբից քանդակում էին գլխի վերևի մասը՝ սկսելով ձակատից և թից, այնուհետև մնացած մասերը: Վերջացնելուց հետո 4 կողմից ժայռը փորվում էր և առանձնացվում արձանը՝ թողնելով մի բարակ քարե պարանոց, որն այն միացնում էր ժայռին:

Հիշենք, որ, ի տարբերություն պարսկական դիցաբանի «մարդկայնացած» Միթրայի, որն ընդամենը Ահուրա-Մազդի որդին է, հայկական դիցաբանում Միհրն ակնառու «աստվածային» ծնունդ է, ծնվում է ժայռից: Մեր համոզմամբ, այդ քարարձանները Միհր-Մեկե-ի արձաններն են, և կղզիաբնակները, որ «բառացիորեն» էին հասկացել Միհրի՝ ժայռից ծնվելու գաղափարը, նրան պարզապես «ծնում» էին ժայռից: Ուշադրություն ենք հրավիրում Ստինգլի հետևյալ տողի վրա. «...թողնելով արձանը ժայռին միացնող մի բարակ, քարե

⁸ Մ. Գավուբյան, Արմեն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրոթ, 1973, էջ 312:

պարանոց»⁹, իսկ քիչ հետո զարմանալի խորաթափանցությամբ ավելացնում է. «...իսկ գուցե այդ ամենամեծ կուռքերը այդպես էլ պետք է մնային այստեղ՝ բարակ պորտալարով հավերժ միացած մայր ժայռին»¹⁰,

Այսպիսով, Միհր-Մեկե-ին ոչ միայն «ծնում» էին ժայռից, այլև առժամանակ մի բարակ պորտալարով միացած էին թողնում «մայր ժայռին»:

Պոլինեզիայի առաջին հայտնագործողներից մեկը՝ կապիտան Կուկը նշում է, թե կղզիաբնակներն ինչպես էին անվանում սրբարաններում տեղադրված արձանները և տարակուսում, որ բոլոր անունները միշտ նկարագրական բնույթ էին կրում, օրինակ՝ «դաշված»։ Համադրենք չափազանց ուշագրավ մի փաստ. Պոլինեզիայի կղզիներում սեռական հասունացման ակնառու վկայությունը համարվում էր... դաշվածքը։ Այսպիսով, դաշված բառը կղզիարևելիկների լեզվում նշանակել է սեռապես հասունացած, արթունքի հասած, մի խոսքով՝ պատանի։ Հանրահայտ փաստ է, որ Միհրը միշտ պատկերվում էր ծածանվող կարճ հագուստ հագած պատանու տեսքով...։ Միանգամայն պարզ է դառնում, թե ինչու՞ նրան կերտում էին ճիշտ այնպես, ինչպես ծնվում են նորածինները՝ սկզբից քիթն ու ճակատը, այնուհետև մի բարակ պորտալարով առժամանակ միացած էին թողնում մայր ժայռին. նա պետք է հասունանար, դառնար պատանի, նոր միայն կարելի էր նրան կտրել ժայռից և կանգնեցնել սրբարանում...։

Սրբարաններում տեղադրելու հանգամանքը ինքնին ապացուցում է, որ դրանք իրոք աստծո արձաններ էին և ոչ թե առանձին ցեղերի առաջնորդների, ինչպես ենթադրում էին որոշ հետազոտողներ։

Հայտնի է, որ հեթանոսական աստվածներն ունեցել են իրենց, այսպես կոչված, ատրիբուտներ (հետագայում անցել են նաև քրիստոնեություն)։ Ատրիբուտը հատկություն է կամ իր, որը անբաժանելի է առարկայից, ճիշտնե՞րն հատկանիշ է, որը անփափախ պատկանում է աստվածության (օրինակ՝ Զևսի Ա. կայծակի պատկերումն է, գայիսոնը, արծիվը, Նիկե աստվածուհին. Աթենասի Ա՝ «այծենին և բուն», «...ատրիբուտներ են եղել նաև բազմազան առարկաներ, բույսեր, թռչուններ (ընդգծումները մերն են—Լ. Ս.), կենդանիներ...»¹¹,

Իսկ որո՞նք էին Միհրի ատրիբուտները։ Միհրը միշտ կրում է հայկական կամ փոյուզիական գդակ։ Դիցաբանական բառարանը ևս հաստատում է, որ «Մ. պատկերվում էր փոյուզիական թասակով և ծածանվող կարճ հագուստով»¹²։ Ուրեմն, վստահորեն կարելի է ասել, որ գդակը Միհրի ատրիբուտն էր։

Մ. Ստինգլը վկայում է, որ Պոլինեզիան հայտնաբերող եվրոպացիները սրբարաններում տեղադրված քարարձանների գլխին տեսել են կարմիր հրաբխային քարից կերտված հսկայաշափ գլխարկներ։

Հենց այդպիսի գդակ ունի Նեմրութ լեռան (Հայկական Տավրոս) հուշարձանախմբի Ապոլլոն-Միհրի հսկա կիսանդրին, նույնպիսի սրածայր գդակով է Արևելի աստված Միհրի ծնունդը՝ հռոմեական հարթաքանդակում։ Տարբերությունն այն է, որ Նեմրութ լեռան կիսանդրու գդակը կերտված է միևնույն քարակտորից, այնինչ Զատկի կղզում այն կերտվում էր ոչ թե նույն միակտոր քարից, ոչ թե անմիջապես արձանը քանդակելիս, այլ բոլորովին մի այլ քարհանքում, կղզու հակառակ կողմում գտնվող Պունա Պաու խառնարանի մոտ և հետո միայն, հայտնի չէ, թե ի՞նչ ճիգերով, այդ հսկա գդակները «հագցնում» էին արձանների գլխին։ Մի՞թե սա այն անվիճելի փաստը չէ, որ ապացուցում է, թե իրոք, ռապանույցիները «բառացիորեն» էին հասկացել Միհրին վերաբերող ամեն ինչ. ոչ մի նորածին գդակով չի ծնվում, Միհրը պիտի «ծնվեր» ժայռից, առժամանակ «հասունանար», որից հետո կանգնեք սրբարանում և նոր միայն կարելի էր նրան «գդակ» հագցնել...

Այսպիսով, առայժմ ոչինչ չի հակասում այն տեսակետին, թե, նախ, Մեկե-

⁹ М. Стингл, *նշվ. աշխ.* էջ 197:

¹⁰ Նույն տեղում, էջ 198:

¹¹ Մ. Ն. Բաովինելի և ուրիշներ, *Դիցաբանական բառարան*, Ե., 1985, էջ 32:

¹² Նույն տեղում, էջ 157:

Մեկեն պոլինեզիական Միհրն է, և երկրորդ, որ այդ հանելուկային արձանները գերագույն աստված Մեկե-Մեկեի արձաններն են։ Այդ տեսակետի օգտին է խոսում նաև այն փաստը, որ բոլոր արձանները (ի դեպ, դրանց թիվը Զատկի կղզում հասնում է 700-ի), միադեն են։

Այժմ փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ այդ արձաններն այդքան բազմաքանակ են և տարրեր չափերի։ Հանրահայտ փաստ է, որ հեթանոսական աստվածները հաճախ, «պաշտոնափոխվել», երբեմն նույնիսկ «պաշտոնազրկվել» են։ Ինչպես հավաստում է Պոլինեզիայի գիտակ Ստինդլը, Մեկե-Մեկեին նույնպես որոշ ժամանակ անց փոխարինել է Տանե (Тахе) աստվածը։ Ըստ երևույթին, մինչև «պաշտոնազրկությունը» նա նաև «պաշտոնափոխվել» է. Արեի, Կրակի, երբեմնի գերագույն աստվածը կամաց-կամաց դարձել է օջախի, առնմի պահապան (հիշեցնենք, որ Միհրի ծիսակատարությունների և այլ մեհնական տոների մեջ կրակի պաշտամունքը սերտորեն կապված էր օջախ-ընտանիքի սրբության հետ), և յուրաքանչյուր ցեղ, տոհմ, ցանկացել է ունենալ իր Մեկեն։ Ահա թե ինչո՞ւ ներքին աղբյուրները ասում են և այդքան տարրեր չափերի. յուրաքանչյուր քիչ թե շատ ազգեցիկ տոհմ աշխատել է ոչ միայն ունենալ «սեփական» Մեկե, այլև ցանկացել է, որ այն չափերով գերազանցի մյուս տոհմերի Մեկե-ներին։

Մասնագետների կարծիքով, Զատկի կղզու քարարձանները կերտվել են կղզու պատմության II շրջանում, այնպես, որ Միհր-Մեկեն բավականին ժամանակ ուներ «պաշտոնափոխվելու» համար։ Մ.Ստինդլը զարմանքով նշում է, որ պոլինեզիական աստվածներից միայն այս մեկն ունի կրկնվող անուն։ Հիշենք «ակու-ակու» բառը, որը նշանակում է ռզիներ։ Ենթադրում ենք, որ ուսպանուի լեզվում հոգնակի թիվը կազմվում է արմատի կրկնությամբ. Մեկե-Մեկե նշանակում է Մեկեներ։ Մեկեն այլևս միակ գերագույն աստվածը չէր, այլ օջախի, ընտանիքի, տոհմի պահապան բազմաթիվ Մեկեներ։

Հայկական դիցարանում Միհրի հետ էր կապվում նաև սև ագռավը։ Սև գույնը կապվում է կրակի, այրման, քարածխի, մոխրի հետ (հեթանոսական Հայաստանում տարածված էր նաև մոխրապաշտությունը)։ Հիշենք, որ Վանի Մհերի Դուռ կոչվող քարանձավը անվանվում էր նաև Ագռավաքար։ Ըստ արեւելյան ավանդությունների, ագռավը բարի կերպար էր, կրակապաշտ ժողովուրդների սուրբ թռչունը, կրակի աստծո խորհրդանիշը և հեթանոսների պաշտամունքի առարկան։¹⁸ Ավգալբեգյանը նշում է նաև, որ հայոց մեջ ևս սև գույնն ուրախության գույն էր, իսկ սևի հակառակը՝ սպիտակը՝ սգի¹⁹։ Այսպիսով, սև ագռավը արևի, կրակի աստված Միհրի խորհրդանիշներից էր։ Իսկ կապ ունի՞ արդյոք Մեկեն ագռավի կամ մի այլ թռչունի հետ։ Այո։ Այն, գերագույն աստված լինելուց բացի, շատ հետաքրքիր առաքելություն է ունեցել Զատկի կղզու ավանդություններում։ Այդ նա էր կղզի ուղարկում սև ծիծեռնակներին, որոնք իրենց կարճատև կյանքում հասցնում էին դժվարամատույց ժայռերի վրա թողնել ընդամենը մի քանի ձու։ Սև ծիծեռնակների և նրանց առաջին ձվի հետ է կապված Մարդ-Թռչունի առեղծվածը, որին առայժմ չենք անդրադարձնում։ Ասենք միայն, որ այն ոչ միայն չի հակասում, այլև դալիս է հավաստելու, որ ինչ-ինչ պատճառներով (գուցե ագռավների բացակայությամբ, որը, ցավոք սրտի, հնարավորություն չունեցանք պարզել), ՍԵՎ ագռավներին փոխարինելու են եկել ՍԵՎ ծիծեռնակները։ Հակված ենք ենթադրելու, որ կա նաև ավելի խորը պատճառ, որին, ինչպես նաև Մարդ-Թռչունի առեղծվածին, հուսով ենք անդրադառնալ այլ առիթով։

Մենք նախապես ընդունեցինք, որ ջրհեղեղի մասին առասպելը կարող է դասվել «Թափառող սյուժեների» շարքը, որ սպիտակամորթ, շիկահեր և կապուտաշյա եկվորների» մասին ավանդությունը նույնպես տարածված է, և կարելի է հաշվի չառնել։ Հնարավոր ենք համարում նաև, որ որոշ բառեր նույն-

18 Բ. Ավգալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Ե., 1969, է. 48։

պես կարող են լինել ընդամենը պատահական զուգահեռություններ: Բայց, երբ զուգահեռություններն այսքան շատ են, երբ դրանք բոլորը կապվում են միևնույն՝ Միջագետք-Հայկական լեռնաշխարհ տարածքին, երբ այդ զուգահեռները ժամանակագրական տեսակետից նույնպես չեն հակասում իրար, սա մտածելու առիթ է տալիս: Հարկ ենք համարում նշել, որ այս զուգահեռությունները նկատել ենք պոլինեզիերեն մեզ ծանոթ սակավաթիվ (մոտ 200) բառերի մեջ, առավել սակավաթիվ էին այն բառերը, որոնց իմաստները բացատրված էին Ստրինգլի գրքում, որը, մեր կարծիքով, ավելի նշանակալից է դարձնում այդ զուգահեռները:

Ասենք, որ սրանով չի ավարտվում մեր նկատած նմանությունների ցանկը: Կան մի քանի ապշեցուցիչ զուգահեռներ ևս, և չի բացառվում, որ դրանք թույլ տան բոլորովին նոր հայեցակետից մոտենալ Պոլինեզիայի «առեղծվածային» մշակույթին:

СЛЕДЫ АРИЙЦЕВ В ПОЛИНЕЗИИ

Л. Г. СТЕПАНИАН

Резюме

Между некоторыми полинезийскими и армянскими словами наблюдаются фонетические и семантические сходства. Например, арм. ари—полинез. арии, арикп; арм. манана—полинез. мана; арм. воки—полинез. аку-аку; арм. арман—полинез. арики мау.

От имени армянского языческого бога Мигр (перс. Митра) в армянском языке берут начало следующие слова: мегеан, мегекан, меге-накан. А на вершине пантеона острова Пасхи длительное время находился бог Меке-Меке.

Как известно, в армянской мифологии Мигр рождается из скалы. Знаменитые каменные статуи, высеченные на острове Пасхи, буквально повторяли процесс рождения. Атрибутом Мигра считалась шапка, обрамляющая головы статуй на острове Пасхи. Статуи, стоящие на родовых святилищах, рапануйцы называли «татуированными», что по нашему мнению, по-полинезийски означает «юный». Напомним, что Мигр всегда представлялся в виде юного бога.

В армянской мифологии с именем Мигра связана черная ворона, а с именем бога Меке-Меке—черные морские ласточки.